

«Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական

պլանավորման կենտրոն» հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի

2021 թվականի « 05 »

թիվ 4Ս որոշման

Կ Ա Ր Գ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՏՈՎՈՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգի նպատակն է աջակցել Արցախի Հանրապետությունում գործունեություն ծավալող ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրականացնել իրատեսական ծրագրեր, հետպատերազմյան շրջանում վերականգնել և զարգացնել Արցախի Հանրապետության տնտեսությունը, օգնել տեղահանված մեր հայրենակիցների կառուցել իրենց ապագան Արցախում, իրականացնել Արցախի կայուն ու համաչափ զարգացումն ապահովող տարբեր ծրագրեր՝ նվազեցնելով արտագաղթը:
2. Սույն կարգը կարգավորում է Արցախի Հանրապետությունում գործունեություն ծավալող ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցելու նպատակով փոխառություն տրամադրելու իրավական հիմքերի, սկզբունքների, ձևերի ու ֆինանսավորման մեխանիզմների հետ կապված հարաբերությունները:
3. Սույն կարգի գործողությունը տարածվում է սույն կարգով փոխառություն ստանալու իրավունք ունեցող ԱՀ-ում հաշվառված ֆիզիկական անձանց և գրանցված իրավաբանական անձանց վրա:

II. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
 - 1) *շահառու*՝ սույն կարգով սահմանված փոխառություն ստանալու իրավունք ունեցող 18 /տասնութ/ տարեկանից մինչև 65 /վաթսունհինգ/ տարեկան ցանկացած անձ, ով կներկայացնի իրատեսական ծրագիր և դրա իրագործման համար հաշվարկված ամբողջական գումարը հավաքագրվելուց հետո անհրաժեշտության դեպքում կգրանցվի ԱՀ հարկային մարմնում որպես ֆիզիկական կամ

իրավաբանական անձ: Ընդ որում, նմանատիպ ծրագրեր ներկայացնելու դեպքում նախապատվությունը կտրվի պատերազմի հետևանքով իրենց ունեցվածքը և/կամ բնակավայրը կորցրած, ինչպես նաև սահմանամերձ շրջաններում բնակվող անձանց,

2) *իրավաբանական անձ*՝ կազմակերպություն, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,

3) *մասնակից*՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով դրամական աջակցություն է տրամադրում շահառուների կողմից ներկայացված ծրագրերի իրականացման համար,

4) *նպատակային անտոկոս փոխառություն* (այսուհետ՝ փոխառություն)՝ հիմնադրամի կողմից շահառուին բիզնես ծրագրի իրագործման նպատակով տրամադրվող փոխառություն, որի դեպքում փոխառուն/շահառու/ պարտավոր է ապահովել փոխառության գումարի նպատակային օգտագործման նկատմամբ փոխատուի /Հիմնադրամ կամ մասնակից/ վերահսկողության հնարավորությունը:

II. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Փոխառություն կարող է ստանալ 18 /տասնութ/ տարեկանից մինչև 65 /վաթսուհինգ/ տարեկան շահառուն:
6. Փոխառությունը տրամադրվում է անտոկոս:
7. Փոխառության գումարի նվազագույն չափը սահմանվում է 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ 20 000 000 /քսան միլիոն/ ՀՀ դրամ: Մասնավոր դեպքերում առավելագույն գումարը կարող է վերանայվել՝ սույն կարգի 9-րդ կետի համաձայն:
8. Փոխառությունը տրամադրվում է առավելագույնը 10 /տասը/ տարի մարման ժամկետով՝ կախված շահառուի տարիքից, կարգավիճակից, փոխառության գումարի և շահառուի եկամուտների չափից: Փոխառության մարման վերջնաժամկետը չի կարող գերազանցել շահառուի՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված առավելագույն տարիքը: Մասնավոր դեպքերում մարման առավելագույն ժամկետը կարող է երկարացվել՝ սույն կարգի 9-րդ կետի համաձայն:
9. Մասնավոր դեպք են համարվում այն ծրագրերը, որոնք առանձնանում են իրենց եզակիությամբ ու արդյունավետությամբ, պահանջում են սահմանված առավելագույն գումարից ավել ներդրում և/կամ փոխառության գումարի մարման առավելագույն ժամկետից երկար ժամկետ: Նման ծրագրերի ընդունումը հաստատվում է հոգաբարձուների խորհրդի ձայների մեծամասնությամբ՝ Հիմնադրամի գլխավոր տնօրենի ներկայացմամբ:
10. Փոխառությունը տրամադրվում է ՀՀ դրամով:
11. Փոխառությունը տրամադրվում է անկանխիկ:

12. Շահառուի վճարունակությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով շահառուի առկա և/կամ կանխատեսվող եկամուտների/շահույթի չափը:
13. Փոխառության գումարի մարումները շահառուի կողմից իրականացվում են ամսական պարբերականությամբ՝ տրամադրված ամբողջ գումարի հավասարաչափ մարումներով կամ սույն կարգի 12-րդ կետով սահմանված չափով /փոխառության մարման տարբերակը որոշվում է հիմնադրամի հայեցողությամբ՝ հաշվի առնելով շահառուի նախընտրությունը/:
14. «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամ/ նկատմամբ շահառուի ֆինանսական պարտավորությունների չմարման դեպքում Հիմնադրամը իրավասու է ազատ տնօրինել/տիրապետել/օգտագործել Հիմնադրամի կողմից տրամադրված գումարով ձեռքբերված նյութական արժեք ունեցող գույքը:
15. Վերոնշյալ կետերից յուրաքանչյուրի ընթացքում առաջացած տարաձայնությունները ենթակա են լուծման ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

III. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

16. Սույն կարգով սահմանված փոխառությունը ստանալու նպատակով շահառուն օգտագործման պայմաններին ծանոթանալուց հետո Հիմնադրամ է ներկայացնում դիմում-հայտ /այսուհետ՝ հայտ/՝ կցելով սույն կարգի 39-րդ կետով սահմանված փաստաթղթերը: Հայտի ձև սահմանվում է Հիմնադրամի կողմից:
17. Հայտի հետ մեկտեղ շահառուն պետք է ներկայացնի Հիմնադրամի կողմից մշակված բիզնես մոդելին համապատասխան նախագիծ:
18. Սույն կարգի 17-րդ կետով սահմանված բիզնես մոդելին համապատասխան նախագիծը մասնագիտական մակարդակով կազմելու համար Հիմնադրամը առաջարկում է Բարեգործական և ինվեստիցիոն ծրագրերի ռազմավարական պլանավորման բաժնի մասնագետների կողմից բիզնես պլանի մշակում (3 /երեք/ տարբեր լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն), որի արժեքն է 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ հարկեր:
19. Հայտով ներկայացված տեղեկությունների հավաստիությունը պարզելու նպատակով Հիմնադրամը և/կամ շահառուն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆինանսական կազմակերպություններից, այլ կառույցներից ու կազմակերպություններից կարող է ստանալ օրենքով չարգելված եզրակացություններ, պարզաբանումներ ու տեղեկություններ /շահառուի համաձայնությամբ/:
20. Հայտը համարվում է ընդունված միայն այն դեպքում, երբ պահանջվող փաստաթղթերը ներկայացված են ամբողջությամբ և ստորագրված է շահառուի կողմից: Հայտերն ուսումնասիրվում են դիմումի ամբողջական փաթեթի ընդունման պահից հերթականության սկզբունքով:

21. Հայտն ընդունելուց հետո 15 /տասնհինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը կայացնում է որոշում հայտը հաստատելու կամ մերժելու մասին:
22. Հիմնադրամը հայտը կարող է մերժվել հետևյալ հիմքերով.
- 1) շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին կամ ներկայացված փաստաթղթերում առկա են ոչ արժանահավատ տվյալներ,
 - 2) առկա է շահառուի կողմից պարտավորությունը չմարելու կամ այլ խարդախությունների ակնհայտ միտում,
 - 3) շահառուն Հիմնադրամում կամ ցանկացած այլ ֆինանսական և վարկային կազմակերպություններում, ունի ժամկետանց պարտավորություն,
 - 4) շահառուի ֆինանսական հնարավորությունների ուսումնասիրության արդյունքում,
 - 5) առկա է նախկինում տվյալ շահառուի կամ այլ դիմորդների կողմից ներկայացված նույն կամ նմանատիպ ծրագրի մերժում,
 - 6) քննարկումների և ուսումնասիրությունների արդյունքում ծրագիրը ճանաչվել է ոչ արդյունավետ կամ ոչ մրցունակ:
23. Հիմնադրամը հայտի հաստատման կամ մերժման որոշման մասին շահառուին տեղեկացնում է որոշումն ընդունելուց 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում:

IV. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

24. Հայտը հաստատվելու դեպքում 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում շահառուն Հիմնադրամին պետք է ներկայացնի ծրագրի մասին տեսաձայնագրություն /տեսահոլովակ/: Վիդեո դիմումի պարտադիր ձևաչափ՝ խոսքի բովանդակություն և տեխնիկական պարամետրեր.
- 1) ուղեկցող խոսքը պետք է ներկայացնի շահառուի անձնական պատմությունը՝ անուն, ազգանուն, որտեղ է բնակվում, ինչով էր զբաղվում մինչև պատերազմը, ինչ հմտություն, տաղանդ կամ մասնագիտություն ունի (շահառուի հայեցողությամբ տեսաձայնագրության մեջ կարող է ընդգրկվել նաև անձնական այլ տեղեկություն՝ ցանկացած դեպքում պահպանելով բովանդակության տրամաբանական ընթացք),
 - 2) ծրագրի ներկայացում՝ հակիրճ նկարագիր, ինչ նպատակ է հետապնդում, ինչ խնդրի լուծման է նպաստելու տվյալ ծրագիրը,
 - 3) ֆինանսավորում ներգրավելու նպատակով կոչով դիմում հանրությանը և ամփոփում,
 - 4) առնվազն 1 /մեկ/ անգամ շահառուն պետք է հստակ տեսանելի լինի տեսահոլովակում,
 - 5) տևողությունը չպետք է գերազանցի 2 /երկու/ րոպեն,
 - 6) պետք է նկարահանված լինի բարձր որակով, պատկերները լինեն հստակ, իսկ ուղեկցող ձայնը/խոսքը՝ հասկանալի ու գրագետ:

25. Տեսաձայնագրության հետ մեկտեղ շահառուի կողմից Հիմնադրամին պետք է տրամադրվեն շահառուի ծրագիրը/մտահղացումը ներկայացնող բարձր որակի առնվազն 3 /երեք/ նկար:
26. Վիդեո և ֆոտո նկարահանումները տրամադրելուց 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում շահառուի կողմից ներկայացված ծրագիրը /նկար, տեսաձայնագրություն և ծրագրի հակիրճ նկարագիր/ տեղադրվում է հիմնադրամի առցանց հարթակում՝ ahimnadram.com կայքէջում:
27. Ծրագրի ամբողջական ֆինանսավորման համար կսահմանվի վերջնաժամկետ (90 /իննսուն/ օրացուցային օր), որի ընթացքում պետք է հավաքագրվի ծրագրի իրագործման համար անհրաժեշտ ամբողջ գումարը:
28. Մինչև սույն կարգի 27-րդ կետով սահմանված վերջնաժամկետը ծրագրի իրագործման համար նախատեսված ամբողջ գումարի չհավաքագրման հնարավոր դեպքերն են՝
- 1) ամբողջ գումարի մինչև 50% լրանալու դեպքում հավաքագրված գումարը կբաշխվի Հիմնադրամի կայքէջում տեղադրված այլ բիզնես ծրագրերի միջև,
 - 2) գումարի ֆինանսավորման 51-85%-ի դեպքում ծրագրի վերջնաժամկետը երկարաձգվում է ևս 15 /տասնհինգ/ օրացուցային օրով: Այս ընթացքում հիմնադրամը կդիմի տվյալ ծրագրին աջակցություն տրամադրած մասնակիցներին՝ առաջարկելով համալրել գումարը, քանի որ նրանք արդեն իսկ հետաքրքրված էին տվյալ ծրագրի իրագործմամբ, ինչպես նաև տվյալ ոլորտի համապատասխան պետական կառույցներին՝ պետական բյուջեից ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով: Այնուամենայնիվ, գումարի չհավաքագրման դեպքում որոշ մասը (հավաքագրված գումարի 20%-ի՝ առավելագույնը 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով) կուղղվի տվյալ ծրագրի շահառուի նյութական կարիքների բավարարմանը /անկանխիկ եղանակով/, մնացածը կվերաբաշխվի այլ ծրագրերի միջև:
 - 3) գումարի 86-99%-ի ֆինանսավորման դեպքում կատարվում է ծրագրի վերանայում՝ հավաքագրված գումարի սահմաններում ծրագիրը համապատասխանեցնելու նկատառումներով: Այս դեպքում հնարավոր է ամբողջական արժեքի համալրում հիմնադրամի ֆոնդից կամ պետական բյուջեից:
29. Սույն կարգի 28-րդ կետի 1-ին և 2-րդ դրույթներով նշված գումարի վերաբաշխումը կատարվում է այն ծրագրերի միջև, որոնք նախապես կընտրվեն մասնակցի կողմից որպես այլընտրանք:
30. Մասնակցի կողմից որպես այլընտրանք ծրագիր չընտրվելու դեպքում ծրագրերի միջև գումարի վերաբաշխումը կատարվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ձայների մեծամասնությամբ՝ հիմնադրամի գլխավոր տնօրենի ներկայացմամբ:
31. Ծրագրերին հնարավոր է աջակցել նաև բնափրային տարբերակով՝ ծրագրում նախապես տեղադրված անհրաժեշտ առարկաների ցանկին համապատասխան /բնափրային աջակցությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով/:

32. Անհրաժեշտ գումարը հավաքագրելուց 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում հիմնադրամի և շահառուի միջև կնքվում է նպատակային անտոկոս փոխառության պայմանագիր:
33. Փոխառության գումարը փուլ առ փուլ /համաձայն փոխառության պայմանագրի/ փոխանցվում է շահառուի հաշվարկային հաշվին, որի հիման վրա շահառուի կողմից ստորագրվում է ստացական:
34. Հիմնադրամը սույն կարգով սահմանված փոխառությունն ստացած շահառուների ծրագրի ֆինանսավորման ցանկացած փուլում պարբերաբար իրականացնելու է վերահսկողություն/մոնիթորինգ՝ Հիմնադրամի համապատասխան բաժնի կողմից սահմանված կարգով: Կախված բիզնես նախագծի ոլորտային առանձնահատկություններից՝ վերահսկողության մեխանիզմները կարող են տարբերվել, որի հիմնական նպատակն է ստուգել նախագծի կատարողականը, արձանագրել պլանավորած գործընթացից զգալի շեղումները, բացահայտել դրանց պատճառները և առաջարկել բարելավման տարբերակներ:
35. Այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ակնհայտ վկայում են, որ շահառուին հաջորդական փուլի համար տրամադրված գումարը նպատակային չի օգտագործվել, հիմնադրամը վերջինիս հնարավորություն է տալիս սեփական միջոցների հաշվին կատարել տվյալ փուլի համար անհրաժեշտ ծախսերը, իսկ պարտավորության հերթական չկատարման դեպքում հիմնադրամը կամ նրա իրավահաջորդն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել պայմանագրով նախատեսված փոխառության գումարը շահառուին տրամադրելուց և պահանջել մինչ այդ տրամադրված գումարի վերադարձ:
36. Հիմնադրամը կարող է նաև միջնորդ հանդիսանալ շահառուի և մասնակիցի՝ դրամական միջոց տրամադրողի միջև, որի դեպքում շահառուն պարտավորվում է փոխառության գումարը սույն կարգով նշված ընթացակարգով և պայմաններով վերադարձնել մասնակցին: Սույն դրույթը գործում է մասնակցի կողմից ծրագրի ամբողջական ֆինանսավորման դեպքում, որի վրա տարածվում են տվյալ կարգի բոլոր դրույթները:
37. Մարումների ժամանակացույցով նախատեսված ժամկետներում փոխառության չմարման դեպքում Հիմնադրամը շահառուից գանձում է տույժ՝ համաձայն փոխառության պայմանագրի:
38. Ծրագրի ֆինանսավորման ավարտից հետո Հիմնադրամի կողմից կպատրաստվի հաշվետվության ամբողջական փաթեթ՝ ֆոտո, վիդեո և ֆինանսական հաշվետվության տեսքով, որը տեղադրվելու է Հիմնադրամի առցանց հարթակում: Զեկույցում նաև ընդգրկվելու են նախագծի իրագործման ընթացքում արձանագրված խարդախությունների փորձերը և ձախողումների դեպքերը:
39. Բիզնես ծրագրի իրագործման ավարտից 3-6 ամիս հետո՝ կախված տվյալ ծրագրի առանձնահատկություններից, շահառուն պարտավորվում է ըստ պայմանագրով

սահմանված ժամակացույցի /ամենամսյա վճարումների տեսքով/ հետ վերադարձնել տրամադրված ամբողջ գումարը:

V. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

40. Սույն կարգով փոխառություն ստանալու նպատակով շահառուն հայտին կից հիմնադրամ է ներկայացնում.
- 1) շահառուի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,
 - 2) տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին,
 - 3) գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճեն /այն գույքը, որտեղ պլանավորվում է բիզնես ծրագիրն իրականացնել/, /առկայության դեպքում/,
 - 4) այլ փաստաթղթեր՝ Հիմնադրամի կողմից դրանք ներկայացնելու անհրաժեշտությունը հիմնավորելու դեպքում:

VI. ԱՅԼ ԴՐՈՒՑԹՆԵՐ

41. Սույն կարգով սահմանված փոխառությունից օգտվելու նպատակով Հիմնադրամի Բարեգործական և ինվեստիցիոն ծրագրերի ռազմավարական պլանավորման բաժինը շահառուներին տալիս է կարգի դրույթների պարզաբանումներ:
42. Ծրագրի իրագործման ողջ ժամանակահատվածում և դրանից հետո ցանկացած ժամանակ Հիմնադրամը պարտավորվում է առանց շահառուի գրավոր համաձայնության չբացահայտել և/կամ երրորդ անձի կամ իր սեփական շահերի համար չօգտագործել որևէ առևտրային գաղտնիք, մտավոր սեփականություն կամ կոնֆիդենցիալ տեղեկատվություն:
43. Սույն կարգի հիմնական դրույթներն ու սկզբունքները կարող են փոփոխվել՝ ելնելով Հիմնադրամի գործունեության ծրագրային նպատակների փոփոխությունից:
44. Այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն կարգով, կարգավորվում են ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և Հիմնադրամի կառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Լ.ՂՈՒԼՅԱՆ